

Ս. Բոգոսլան

20-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Հայկական երգիծական մամուլը 20-ական թվականներին զարգանում է երկու ուղղությամբ՝ սփյուռքահայ իրականության մեջ՝ «Իգնատ աղա» — Կ. Պոլիս, «Հայկական սինեմա» — Կահիրե, «Խարտոց» — Փարիզ, «Կեն-օ-կո» — Նյու-Յորք և հայկական ու վրացական սովետական ռեսպուբլիկաներում՝ «Շեշտ», «Զուռնա», «Կարմիր մոծակ» — Երևան, «Խաթաբալա», «Կարմիր աքլոր» և «Կարիճ» — Թիֆլիս:

Եթե սփյուռքահայ երգիծական մամուլը շարունակում է ժողովրդա-դեմոկրատական դիրքերից քննադատել բուրժուական բարքերը, նախորդ տարիների համեմատությամբ ավելի խիստ, առավել հետևողականությամբ, ապա բուն Հայաստանում երգիծանքի մտրակը ուղղված էր երիտասարդ սովետական ռեսպուբլիկայի ներքին և արտաքին թշնամիների դեմ:

Սփյուռքահայ երգիծական պարբերականներից նշանավոր է Կ. Պոլսում Ե. Օտյանի խմբագրությամբ հրատարակվող «Իգնատ աղա» ամսագիրը:

Բացելով Առաջին համաշխարհային պատերազմից հետո հայ իրականության մեջ ստեղծված հակասությունների կծիկը, ամսագիրը մատնանշում է նրա խոցելի կողմերը և հասարակական-քաղաքական հասունացած հարցերին պատասխանում հասարակ ժողովրդի շահերից ելնելով: Ամսագրի անդրամիկ համարի առաջնորդող հոդվածում այսպես են ձևակերպվում նրա ուղղությունն ու նպատակները, վերաբերմունքը այսպես կոչված «հեղափոխական» կուսակցությունների նկատմամբ:

«Բարեացկամ չեզոքություն, մեզի վերապահելով հանդերձ կուսակցականներու ծիծաղելիությունները մատնանիշ ընելու իրավունքը: Վերաբերմունք դեպի երևսնյա հանրապետությունը (դաշնակների ստեղծած հանրապետությունը 1919—20 թ.—Ս. Բ.):

— Առ այժմ քաղաքական հարցերով պիտի չզբաղվինք: Դիրքավորում կզգային ինքնավարության հանդեպ. քննադատություն առանց ետին մտքերու»:

Ապա՝

«Մենք կանխակալ կարծիքներով, շինված համոզումներով հրապարակ չենք իջներ այս ու այն կուսակցության դեմ: Մենք դիտողներ պիտի ըլլանք. բարձրեն: դիտողներ՝ և երբ առիթը ներկայանա՝ մեր այդ բարձրությունեն ծիծաղողներ»:

Այսպիսով, «ամենայն անաչառության» չեզոք դիրքն է ելակետը, որով պետք է առաջնորդվի ամսագիրը. բայց իրականում այդպես չէր:

«Հայաստանեն լուրեր» սատիրա-ֆանտազիայում մերկացվում և սուր ծաղրի են ենթարկվում այդ պարտիաների, ինչպես և պահպանողականների իշխանության հասնելու տենչը, համաժողովրդական պարտիա ներկայանալու ձգտումները: Հեղինակը (ի դեպ ֆելիետոնների մեծ մասը անստորագիր է,

սակայն կարելի է ենթադրել, որ դրանք պատկանում են Ն. Օտյանի գրչին) ընթերցողին տեղափոխում է իբր թե արդեն ստեղծված «միացյալ անկախ» Հայաստան. հայկաշեն մայրաքաղաքով, և համառոտ ու պարզաբան ձևի մեջ քաղաքական հրատապ սրությամբ գծում նրանց «ղեկավարած» պետության գրոտեսկային պատկերը: Անկարգություններին և քաղաքական ցույցերին վերջ չկա. մինչև 1930 թ. մայիս ամիսը իշխանությունն ամեն շաբաթ փոխվում է, մինչև որ զինված ժողովուրդը քշում է նրանց և իշխանությունն առնում իր ձեռքը:

Դժվար չէ նկատել, որ այս եզրակացությունը՝ ռեուլյուցիոն ժողովրդի կողմից իշխանությունը գրավելու մասին, արված է անմիջականորեն Հոկտեմբերի ազդեցությամբ և հեղինակի սխալը լուր ժամանակի մեջ է:

Ամսագիրը ոչնչացնող ծաղրի է ենթարկում որոշ քաղաքականների երկերեսանությունն ու սատրաքարությունը, նրանց ճառերի և կոչերի անմտությունն ու դատարկությունը: Շարքային քաղքենու տրտուռներուց ելնում է նորաթուխ «ջոջերի» անմիտ արարքների կենդանի պատկերը:

«Հազիվ թե հանգչելու համար քիչ մը նստած եմ՝ հանկարծ «ոտքի ելի՛ր հայ ժողովուրդ» կպռու: Եվ ահա 24 ժամ ոտքի կեցելե ետքը, հետևյալ առտու կը պռուա «Առաջ քալե՛ հայ ժողովուրդ» ու 24 ժամ կը քալեմ, մինչև որ դարձյալ հետևյալ առտու պռուա. «Ժողովուրդ, պատրաստ կեցիր», պատրաստ կը կենամ ու ահա՝ քունս կը տանի: Հազիվ թե աչքս դոցած եմ՝ «Արմենիա՛ր հայ ժողովուրդ» կը գռուա մեր առաջնորդը: Քաշվելիք բան է աշիկա... ամեն որ «ոտքի ելի՛ր, նստե, քալե, գլուխդ վեր բռնե, ձախակողմ դարձիր, աջակողմե հեռացիր...»:

Ամսագիրն առատորեն օգտագործում է կոմիկական ալլոգորիա և ժողովրդական բուֆոնադի հնարքները: Իր պարտիայի ծրագրի մասին միտինդում ճառելիս, Իգնատ աղան մտքով սլանում է մինչև խմիչքի արվելումը Ամերիկայում և, ի վերջո, ընկնում այն տակառի մեջ, որի վրա ճառախոսում է ինքը:

Քննադատության կրակի տակ է առնվում իրենց ներկայի շահերով և հաշիվներով առաջնորդվող քաղաքական այդ պարտիաների ավանտյուրիստական գործարքները («Անբացատրելի ձեռնպահություն մը»): Սրամիտ, բայց և դժբախտաբար անստորագիր, ծաղրանկարի նյութ է դարձել Ազգային ժողովի գործունեությունը: Հեռուստաներ «Ազգային ժողով» ցուցանակը կրող դուռն է քաշում՝ ձգելով սարսափահար մի մարդու փողկապից, համառորեն դիմադրող մեկ ուրիշին հրում են ետևից. ըստ որում ծանոթությունը հայտնում է, որ «մեծամտությունը այս կերպով կարելի է կազմել»: Եվ վերջապես, համարից-համար «Նոր ազգային ջոջեր» խորագրի տակ տպագրվող նյութերում տրվում են պարտիական գործիչների սատիրական դիմանկարները:

Ամսագիրը լայնորեն ցուցադրում է կապիտալիստական քաղաքի սոցիալական երկրիեղկվածությունը: Եթե դաշնականների և ուրիշների վերաբերյալ քննադատության մեջ ամսագիրը ձեռք է մեկնում երբեմն կատակին ու բուֆոնադին, ապա այստեղ արդեն սատիրան տոգորված է փոքր մարդու բախտի նկատմամբ վշտով և ցավով: «Օրվան դայթակղությունը» պատմվածքը ազնիվ զայրույթի ցասկոտ պոռթկում է բոլոր նրանց դեմ, ովքեր ճարպկորեն իրենց օգուտն են կորզում՝ թաքնված բարեգործի դիմակի տակ. կոտորածից ճողոպրած աղջկան «որդեգրում» է ազգային քաղաքական հայտնի գործիչը (հեղինակը

չի տալիս նրա անունը, հավատացած լինելով, որ այն բոլորին քաջ հայտնի է), ախուհետե գայթակղում է նրան և, որպեսզի հետքերը կորցնի, դուրս չպրոտում տնից: «Ամենն սոսկալին այն է,—գրում է հեղինակը,—թե առաջին անգամ չէ, որ այսպիսի հրեշավոր արարք մը տեղի կոմենա»:

Երգիծանքի բոլոր միջոցներով՝ ֆելիետոն-պամֆլետ, կատակ-գրոտեսք, սատիրական հրատապ տեղեկություն, ծաղրանկար՝ «Մտրակող» ստորագրությամբ,—ամսագիրը խարազանում է ժլատությունը ու ընչաքաղցությունը, ազգի ճակատագրի նկատմամբ ծայր անտարբերությունը:

Առաջ քաշելով հայ հասարակությանը հուզող խնդիրներ, ամսագիրը, իհարկե, դուրս չի գալիս զուտ ազգային հետաքրքրությունների շրջանակներից, թեև նրա արծարծած փաստերը հիմք կարող են ծառայել ավելի լայն ընդհանրացումների համար: «Ծուկներու բողոքը» հոգվածում մկները, բողոքելով կառավարության այն որոշման դեմ, որով ոչնչացնում են իրենց, որպես ժանտախտ տարածողների, կարգում ենք. «...կհարցնենք ձեզ թե ժանտախտը իր ամենն մեծ կոտորումները գործած ատենը իսկ չորս տարուն մեջ 25 միլիոն մարդու մահվան պատճառ եղած է, ինչպես եղավ ընդհանուր պատերազմը» և այնուհետև «...և եթե հարկ է մարդկային կյանքերու դեմ մահ սփռելու պատասխանատուները բնաջինջ ընել, ինչու՞ միևնույն ժամանակ անպատիժ կը մնան ընդհանուր պատերազմի պատասխանատուները...»: Մարդկային արդարությունը այն աստիճան վարկաբեկված է, ոտնահարված, որ հեղինակը առաջարկում է այն փոխարինել մկնայինով, գտնելով, որ այն հարյուր անգամ հումանիստական է այդ արդարությունից:

Ամսագիրը, միևնույն վերջ հավատարիմ մնալով իրեն, առանց ուսուցիչական, սատիրայի գեղարվեստական միջոցներով նշավակում է հասարակական ամեն տիպի արատ և այլանդակություն:

Ժողովրդի ընդհանուր քայքայվածության, արհավիրքի և դաժան պայքարի պայմանները մի կողմից, ղեկավարող պարտիաների ավանտյուրիստական քաղաքականությունը մյուս կողմից, տեղ չեն թողնում ոչ բարյացակամության և ոչ էլ չեզոքության համար: Ըր դիրքերի այդօրինակ ձևակերպման համար ամսագիրն ուներ երկու պատճառ. նախ և՛ ընդհանուր քայքայվածության և հետո՝ դրանով հետապնդում էր զուտ գեղարվեստական միջոցներով սրել տպավորությունը ռեյեկտիվության խոստման և ընդհանրացման անհամապատասխանության միջև:

«Բզնատ աղան» ունեցել է կարճ կյանք՝ 1919—1920 թթ. և նրա ոչ բոլոր համարներն են, որ հասել են մեզ:

1926—1928 թթ. Փարիզում լույս տեսնող «Խարտոց» ամսագրից մեզ հասել է միայն մի քանի համար, հետևապես և դժվար է ստուգել և հիմնավոր հզրակացություն անել այդ ամսագրի վերաբերյալ: Կարելի է միայն որոշ թուուցիկ դիտողություններ անել նրա դիրքավորման և նպատակների վերաբերյալ, ելնելով մեծ մասամբ նրա ծրագրային սկզբունքներից:

Ամսագիրը հայտարարում է, որ ինքը «...չեզոք չէ, կուսակցական չէ՝, հապա, Անկախ և Ինքնիշխան է Ան»: Դժբախտաբար, անհրաժեշտ նյութեր չկան, որոնք հնարավորություն կընձեռնեին հետևելու, թե այդ ինչպես է երգիծական ամսագիրը դասակարգային պետության և քսանական թվերի քաղաքական սրված պայքարի պայմաններում ապահովել իր «անկախությունը» և

«սովետներենությունը»: Պետք է ասել, որ դաշնակցության գործունեության գնահատման հարցում ամսագիրը շարունակում է ընթանալ դիմակազերծելու և նշավակելու «Իգնատ աղայի» գծած ճանապարհով: Այսպես, «Ներգաղթ» ֆելիետոնում ծաղրի են ենթարկվում ներգաղթի կազմակերպման դաշնակցական առաջնորդները, որոնք ուր որ է կխլեն Հայաստանը «...թուրքերու, քուրդերու, չերկեզներու, չեչենցիներու ձեռքեն» և կամ մեկ ուրիշ տեղում՝ դաշնայինների կծու հարց է տրվում, թե «Ո՞ւր է աշխարհը Հայաստան»:

Նյու-Յորքում և Կահիրեում լույս տեսնող «Կեն-օ-կո» և «Հայկական սինեմա» ամսագրերը շոշափել են առավելապես տեղական բնույթի հարցեր, այդ պատճառով էլ դրանց քննությունը դուրս է մեզ հետաքրքրող հարցերի շրջանակներից:

Սովետական Հայաստանում երգիծական ամսագրի ստեղծման գաղափարը հասունանում է սովետական կարգերի հաստատման հենց առաջին տարիներին: 1923 թվին Վ. Թոթովենցի և ապա 1924 թվին է. Խոջիկի խմբագրությամբ լույս են տեսնում «Շեշտ»-ի երեք և «Զուռնա»-ի մեկ համարները: Այնուհետև 1926 թվին հիմնադրվում է «Կարմիր մոծակ» երգիծական նոր ամսագիրը, որի վերջին համարը լույս է տեսնում 1927 թվին, դրանից հետո, մինչև «Ող-հոտ» հրապարակ գալը, կարելի է ասել, որ երգիծական առանձին օրգան այլևս չի ստեղծվում:

Մի շարք թերթերում և ամսագրերում («Խորհրդային Հայաստան», «Մաճկալ», «Անաստված» և այլն) բացվում են երգիծական բաժիններ և հրատարակվում է «Կորչի պատերազմը» վերնագրով հասարակական-երգիծական մի ժողովածու՝ Ե. Չարենցի խմբագրությամբ:

20-ական թվականներին Թիֆլիսում շարունակվում է հրատարակվել «Խաթաբալա» երգիծական շաբաթաթերթը, որը գոյություն ունենալուց դադարում է 1926 թվին: Նոր երգիծական ամսագրի հիմնադրման փորձը Թիֆլիսում վերաբերում է 1930 թվին, երբ ստեղծվում է «Պրոլետար» թերթի «Կարիճ» երգիծական հավելվածը, որի հրատարակությունը ընդհատվում է հաջորդ տարին:

Այս է Կովկասում հայերեն լեզվով լույս տեսած երգիծական ամսագրերի համառոտ տարեգրությունը:

Հայաստանում և Վրաստանում սովետական կարգերի հաստատման առաջին տասնամյակում նկատվում է երգիծանքի որոշակի աշխուժացում: Այս տարիներին հրապարակ են գալիս երգիծանքի առավել կատարյալ նմուշներ՝ Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» վեպը, Դ. Դեմիրճյանի «Քաջ նազար» ու Ա. Շիրվանզադեի «Մորգանի խնամին» կատակերգությունները, Բակունցի «Հովնաթան Մարչ» վիպակը, Վ. Թոթովենցի «Բժիշկ Բուրբոնյանը», Լեո Կամսարի պամֆլետներն ու ֆելիետոնները:

Այս տարիների երգիծակալն ամսագրերը իրենց հասարակական-քաղաքական հասունությամբ և արվեստով թեև չհասան երգիծական արձակի և դրամատուրգիայի բարձրությանը, այնուամենայնիվ, օրվա շարիքին արձագանքելով, դրական դեր կատարեցին սովետական կյանքում:

Երգիծական ամսագրերը հետապնդում էին երկու նպատակ. ծաղրել, խաբաղանել և ծիծաղեցնել: Կրակի սակ են առնվում Արևմուտքի արտաքին սփյուռքի քաղաքականությունը, միլիտարիստական ոտնձգությունները երիտասարդ սովետական երկրի դեմ, արտասահմանյան հայկական գաղութներում ապաստանած Կովկասի նախկին «տերերի», ջախջախված դաշնակցության շարամիտ

գործունեությունը Սովետական Հայաստանի դեմ և ոչ հեռավոր անցյալից մարդկանց գիտակցության մեջ ապրող սեփականատիրական ձգտումները, սնոտիապաշտությունը, եսասիրությունը, պաշտոնի շարաշահումը և շատ այլ երևույթներ:

Ամսագրերը, լրագրերից մեջ բերելով ընդարձակ նյութեր, ձևավորում են դրանք քաղաքական պայկատներով, ծրագրային հրգիծական գծանկարներով կամ ծաղրանկարներով, իրական փաստերից ընտրում են ժամանակի համար տիպական արատներ և մոլորություններ: Սակայն հարկ է նշել այդ տարիներին լույս տեսնող ամսագրերում մի հիմնական թերություն. քննադատության վերացականություն, կոնկրետի նկատմամբ որոշ անվստահություն, որը թուլացնում է նրանց դաստիարակչական ներգործոն ազդեցության ուժը: Կարճ ասած նմանօրինակ քննադատությունը կարելի է անվանել «սահասցե քննադատություն»: Որոշ դեպքերում խնդրի նմանօրինակ լուծումն, իհարկե, կարող է ունենալ իր դրական կողմը, բայց, երբ այն վերածվում է մի հետևողական սկզբունքի, կորցնում է որոշակիությունը, ուրեմն և ազդեցության ուժը քննադատվելիք երևույթների նկատմամբ:

Իր գոյության կարճ ժամանակամիջոցում «Կարմիր մոծակ» ամսագիրը կարողացավ շոշափել կենցաղին և քաղաքականությանը վերաբերող մի ամբողջ շարք հարցեր, ինչպես և մշակել որոշակի վերաբերմունք անցյալի կուլտուրական ժառանգության վերաբերյալ: Ահա ամսագրի ամենից ավելի տիպական ծաղրանկարներից և ֆելիետոններից մի քանիսը:

Վ. Գայֆեջյանի «ՍնՀՄ-ը, կապիտալիզմը, արտասահմանյան բանվորությունը, նրանց դերը, փոխհարաբերությունը, պողան և բ. բազան» ծաղրանք-կարը պատկերում է երեք կերպարանք. մեջտեղում կանգնած հաստափորի կապիտալիստը բռնցքներով հարձակվում է սվինը պարզած կարմիրբանակայինի վրա, իսկ արտասահմանյան բանվորը հաստափորի բաջկոնի ծայրից բռնած ետ է քաշում. համառոտ՝ կապիտալիստական երկրների բանվոր դասակարգը թույլ չի տա ոտնձգություններ՝ սովետական երկրի դեմ:

Մ. Արուտչյանի «Վատ ծառան» գծանկարը պատկերում է Մայիսմեկյան տոնակատարությունը արտասահմանում: Կապիտալիստը ականջներից բռնած սպառնում է իր ծառային, որ «չի կարողացել» լավ փակել պատուհանը:

«Կենդանի ապրանքի առևտուր» սպանիչ ծաղրանկարը պատկերում է դաշնակցականների պատրաստակամությունը՝ ծառայելու ուղածդ օտարերկրյա տերությանը: Դաշնակցական կուսակցության հայտնի գործիչը պատկերված է կանացի ժայռակավոր զգեստով՝ Մուսոուլինիի առջև սեթևեթելիս. «Ո՛չ, ո՛չ, ձեզանից հոտ է գալիս» — առաջարկվող ծառայությունից հրաժարվում է վերջինս:

Ամսագիրը ինքնատիպ կերպով արձագանքեց Հիդրոշինի շահագործմանը և Երևանի փողոցներում էլեկտրական առաջին լույսերի երևալուն: Բայց այստեղ ևս Փալանդուգ Մկոյի կենցաղագրության մեջ կարդում ենք, որ լուսավորված է միայն Աբովյան փողոցը և այդ փողոցը դուրս եկող յուրաքանչյուրն առաջին պահ կուրանում է վառ լույսից:

Ամսագրին հուզում է նաև քաղաքի մաքրության («Աղբի և մաքրության կուլտը», «Արևելյան հեքիաթ»), և ...հայոց լեզվի անաղարտության հարցերը. «Փնտրվում է երկաթուղու վարչության հայերեն պաշտոնական հրատարակության մեջ մի հատ հայերեն բառ»:

Պետական միջոցների անփույթ շռայլման և որոշ տնտեսավարների անտրնտեսավարության մասին սրամիտ պատմություն է Աշոտ Աթանասյանի՝ Մալման,—պատմվածքը: Գրասենյակի պետը, իրականացնելով «Արժեքների կուտակում» լոգոնգը, իր աշխատակիցներին առաջարկում է խնայել... մատիտը, թանաքը, թուղթը: Եվ որպեսզի ինքնայեռն ածխով չտաքացվի, նրանցից մեկին, էլեկտրական ինքնայեռն բերելու համար, գործուղում է Մոսկվա:

Ամսագիրը տպագրել է նաև Դ. Դեմիրճյանի հումորիստական երեք պատմվածքները: «Գրանիտ ընկերություն» պատմվածքում ծաղրի է ենթարկվում մտավորականության պոռոտախոսությունը և անգործունյա լինելը, «Նա» պատմվածքում խարազանվում է մեծախոսը, որի համար միևնույնն է ինչի մասին, միայն թե խոսի, ապա երրորդ, դաձյալ «Նա» վերնագրով ֆելիետոնում ծաղրվում է 20-ական թվականների պնդամուրը:

Տպագրվել են զվարճալի կարճ պատմվածքներ՝ հարբեցողության և հարբեցողների մասին:

Հակակղերական պրոպագանդան ամսագրի էջերում իր արտացոլումն է գտնում ծաղրանկարների և ֆելիետոնների միջոցով: Եկեղեցին, որպես հնի, իր դարձն ապրած երևույթի կրող և ակումբը, որպես նոր, առաջադիմական հարաբերությունների արդյունք՝ հակադրվում են միմյանց: Մ. Արուստյանի ծաղրանկարում գյուղացին խուլս է տալիս տերտերից, որպեսզի ակումբ գնա, իսկ եկեղեցին դիմում է հազար ու մի խորամանկության:

Ամսագիրը սուր ծաղրի է ենթարկում մեծ շարիքից մինչև փոքրը. գլխավորից մինչև երկրորդականը, թեև նկատելի է, որ նրան երբեմն պակասում է սրությունը, երբ տեղն է, իսկ հաճախ էլ այն ծախսվում է մանրունքների վրա:

Հակակրոնական պրոպագանդան նշանակալի տեղ է գրավում 1928—1930 թվականներին լույս տեսնող «Անաստված» ամսագրում. որը հասարակության ստեղծման, կյանքի ծագման, կրոնի առաջացման և այլ հարցերի շուրջը գիտա-մասնագիտական հոդվածների հետ մեկտեղ տպագրում է նաև երգիծական պատմվածքներ, նկարազարդ սկետչ, պոեմ և անեկդոտ: Հոդվածների անունները իսկ խոսում են նյութի լայն ընդգրկման մասին. «Քրիստոսի ծնունդը» (եթե ճիշտ ըլլար)—Լեո Կամսար, «Կապիտալի ու եկեղեցու դաշխքը», «Դաշնակցություն և կղերականություն անաստվածի կշեռքի վրա», «Ավանս» տերտերական»—Է. Խոջիկ, «Գյուլիզար բաջու ամբուլատորիան»—Դ. Դեմիրճյան, «Սուրբ Գևորգ»—Փալանդուզ Մյոն և այլն:

20-ական թվականների երգիծական գրականության շարքում առանձնակի տեղ է գրավում «Կորչի պատերազմը» ժողովածուն, որ եղել է իմպերիալիստական պատերազմների ծագման մասին մարքսիստական գիտությունը մասնագիտացնելու առաջին փորձերից մեկը: Իհարկե, «Կորչի պատերազմը» չի կարելի «մաքուր» երգիծանք համարել:

Ժողովածուում ղեկավարված են գիտական բնույթի մի շարք հոդվածներ, հատվածներ հակապատերազմական վիպակներից, ինչպես և երգիծական, բանաստեղծություններ, արձակ և ծաղրանկար:

Իրականությունից առնված փաստերի հարստությունը, հակապատերազմական պրոպագանդայի ռևոլյուցիոն կրքոտությունը, ոճի պարզությունը ժողովածուն մատչելի էին դարձնում լայն հասարակայնության համար:

Ժողովածուի մեջ երգիծանքի ասպարեզում հանդես են գալիս նկարիչների

և գրողների նոր անուններ, որոնց տաղանդը բացահայտվում է հետագայում՝ 30-ական թվականներին:

«Կորչի պատերազմը» ժողովածուն պետք է լիներ երգիծական տեսութայամբ գիտա-մասսայական սերիայի առաջին համարը, բայց անհայտ պատճառներով այդ լավ նախաձեռնությունը չի շարունակվում և այն իր տեսակի մեջ մնում է եզակի:

Ինքիսում հրատարակվող «Խաթաբալա» ամսագրի սովետական ժամանակաշրջանի տարեգրությունն սկսվում է 1925 թվից, եթե չհաշվենք վեց տարվա ընդմիջումից հետո 1922 թվին լույս տեսած նրա մեկ համարը:

«Խաթաբալա»-ն (խմբագիր Բասպար Կալատուզյան) «Կարմիր մոծակ»-ից տարբերվում էր իրականության ընդգրկման լայնությամբ, փաստական նյութի հարստությամբ և գեղարվեստական ձևավորման գունեղությամբ: Ամսագիրը իրականության բացասական կողմերի քննադատության հետ միասին հաստատում էր սոցիալիստական գաղափարախոսությունը՝ միմյանց հակադրելով երկու աշխարհ, երկու բարոյախոսություն՝ սոցիալիստականը և կապիտալիստականը: Լենին-դրոշ, զենք-լենինիզմ, նպատակ-համաշխարհային ռևոլյուցիա ելակետից է քննադատում ամսագիրը կապիտալիզմը:

Նշանակալից է այն, որ արդեն 1922 թվին լույս տեսած համարի առաջին էջում տպված է երեք ռեսպուբլիկանների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեյջանի սոցիալիստական ռևոլյուցիայով ստեղծված եղբայրությունը պատկերող պլակատ, որի խորհրդանիշը սովետական զինվորի կարմիր աստղով զլխարկն է:

Ծանոթագրելով միջազգային հարաբերություններին և իրադարձություններին վերաբերող առանձին լուրեր, ամսագիրը նյութի երգիծական մատուցման համար գտնում է արտահայտչական նոր միջոցներ, ինչպես «Սիրված պարեր», «Սիրված ասացվածքներ» շարքերը և այլն:

1926 թվականի № 6-ում ռուսերեն լեզվով տպագրվում է «Խաթաբալա» վերնագրով հոդվածը, որի մեջ ընդհանուր գծերով բնորոշվում է ամսագրի հիմնական տենդենցը. «Խաթաբալա»-ն՝ այդ երբեմն երգիծաբանի սուր ծաղրն է, խարազանող մտրակը, որ անխնա է, մշտապես նպատակին ծառայող և ուժեղ իր անսպասելիությամբ: Երբեմն էլ պարզապես զվարճալի, ժպիտ հարուցող հումորախառն կատակ է: Այն մերթ շառաչ է կյանքի բեմից հեռանալու արժանի երևույթների գլխին, մերթ էլ բեթհոլենյան մահերգ այն ամենին, ինչ բավականին ուշացել է չկեցության գիրկն անցնելու:

«Խաթաբալան» մտրակի դիպուկ հարված է նեխված պառավ Եվրոպայի քաղաքական քաղքենիությանն ու ֆիլիստերությանը:

«Խաթաբալան» սունդուկյանական Պեպոյի՝ ճնշված դասակարգի իրավունքների համար հին աշխարհի դեմ պայքարի համարձակ կոչ նետող ռևոլյուցիոների և բուլետարի կյանքի իմաստությունն է:

Ավելորդ չենք համարում այստեղ նշելու նաև «Պրոլետար» թերթի երգիծական հավելված կազմող նկարազարդ «Կարիճ»-ի մասին, որը շնայած լույս էր տեսնում 1930—1931 թթ. բայց իր արծարծած խնդիրներով կապվում էր 20-ական թվականների իրականության հետ:

Վեր հանելով ժամանակի իրադարձությունները, այն երգիծանքի ընձեռած հնարավորությունների չափով օգնում էր պարտիային և ժողովրդին՝ հաղթահարելու այն ամենը, ինչ արգելակում էր բուռն կերպով զարգացող սոցիալիստական շինարարության առաջընթացին:

1929—1930 թթ. միջև ընկած ժամանակահատվածում սովետական կառավարությունը, ձգտելով կայուն խաղաղության, Ազգերի լիգայի նախապատրաստող հանձնաժողովում երկու անգամ առաջարկություն է մտցնում լրիվ և ապա մասնակի զինաթափման վերաբերյալ: «Կարիճ» ամսագիրը իր № 3-ում և № 10-ում զետեղում է ֆելիետոն և ծաղրանկար՝ դիմակազերծելով իրեն թե զինաթափման ձգտող կապիտալիստական երկրների կեղծավոր քաղաքականությունը. «Խոսում են զինաթափման մասին, բայց թե կարող ես՝ հասիր անցիր» (զինվել—Ս. Բ.):

Գիտակի «խաղաղասեր կատուն» (նվեր լիգայի զինաթափման հանձնաժողովին) ֆելիետոնում կատուն ներկայանում է սափրիչին և խնդրում խուզել բեխերը, որովհետև մկները վախենում են և դրա համար նրանց միջև չկա բարեկամություն, սափրիչը առաջարկում է պոկել ճանկերը և կատուն փախուստի է դիմում:

Ամսագիրը շատ էջեր է հատկացնում հոռմեական Պիոս XI պապի մարտնչող կաթոլիկության մերկացմանը: Ծաղրանկարում Հռոմի պապը պատկերված է իր ճտերին կոշով դիմող աքաղաղի կերպարանքով. «Մուղրուղու... Ճուտիկներ... արշավենք դեպ էսէսեր...»: Սակայն ի պատասխան պապի կոչին, Եվրոպայի բանվորները կազմակերպում են բողոքի ցույց (2-րդ գծանկար):

1929 թվականը, մեծ բեկման տարին, նշանավորվում է սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում ձեռք բերված խոշոր հաղթանակներով: Հայտնի է, սակայն, որ բոլորը չէին, որ ընդունում էին այդ հաջողությունները:

Խրապկովսկու շատ սրամիտ մտահղացում և լուծում ունեցող ծաղրանկարը խարազանում է պահպանողականի կարճատեսությունը: Նորակառույցի լայն ֆոնի վրա հառնել է վերսմբարծ կոռունկը (առաջին պլան), որն օդ է հանել ակնոցավոր մարդուկին: «Կաց, իջեցրեք ինձ,—գոռում է նա,—ես միևնույն է չեմ տեսնի շինարարական հորիզոնը... Չէ որ ես կարճատես եմ»: Մյուս երկու ծաղրանկարում տրակտորը վրա է տվել աջից փախչող մարդուկին, որը գոռում է. «Վայ» էս ինչ անաստվածությունն ա, չի ըլի մի քիչ ձախ քշես...»—իսկ երկրորդում—ամբողջ էջով մեկ քայլում է երկերեսանի մարդը: Ծանոթություն. «Ձախ ֆրազը և աջ գործնականը»:

Սրամիտ ֆելիետոնի, պատմվածքների և ծաղրանկարի նյութ են դարձել պարտիայի շարքերի զտման օրերի իրադարձությունները: Հայելի ստորագրությամբ տպագրված «Ելք դրությունից» զրույցում հետաքրքիր ձևով է օգտագործվում և խաղացվում հայելին: Մեկը, հանկարծ նկատելով, որ իր բեխերը հիշեցնում են Նիկոլայ II բեխերը, շտապում է վարսավիրանոց և խուզել տալիս այն: Խուզելուց հետո էլ սարսափով նկատում է, որ այժմ էլ նմանվում է Կերենսկուն:

Այդ տարիների քաղաքական պլակատների տրադիցիոն կարմիր ցախավելը ավելում է մարդուկին. «Ֆուհ... ինչ վատ հոտ է գալիս, այստեղ երևի ղտում կա»—թթի տակ փնթփնթում է բանվորը:

Կուլակը և կուլակաթափությունը, կոլեկտիվացումը և կոլտնտեսությունը, գյուղական և բանվորական կոոպերատիվները դառնում են ամսագրի առաջատար թեմաները, ըստ որում երգիծական ինքնատիպ պլանով:

Մի կողմից ամսագիրը մտրակում է կուլակին, որպես բանվոր դասակարգի և գյուղական չքավորության թշնամու, մերկացնում նեպաններին, մյուս

կողմից՝ քննադատում է բանկոտանքի թերությունները, տեղական կոոպերատիվների անկազմակերպվածությունը, սննդամթերքի վատ մատակարարումը և այլն:

Ս. Մ. ստորագրությամբ տպագրված «Հրաշք», Տեկանցի «Սրոշնի դեպեշա», Վարդի «Ինսպեկտորի երգը» պատմվածքներում, Նալբանդյանի «Ուրանալուց առաջ», «Սոցապահովագրության դրամարկղում» և այլ ծաղրանկարներում տարբեր կողմերից և տարբեր ձևերով լուսաբանվում են ժամանակի հասունացած հարցերը:

«Կարիճ» ամսագրի նպատակներն ու խնդիրներն ավելի լավ պատկերացնելու համար մեջ բերենք Գուրիսի (Գուրգեն Մահարի) «Հանդիպում ընկեր «Կարիճի» հետ», խմբագրական հոդվածից մի հատված. «Մեզ թվում է, որ մեր իրականության այլանդակությունները խայթելու համար մոծակ չպետք է լինել, որքան էլ այդ մոծակը կարմիր լինի: Ինչպես տեսաք, «Կարմիր մոծակ»-ը վախճանվեց մի տխուր մահով այն ժամանակ, երբ հարկավոր է անցնել ինտենսիվ և անընդհատ խայթման: Թող դողան կեղծ դեմոկրատները ու անկեղծ բյուրոկրատները, խորհրդային շինարարության ստույգ թշնամիները ու միանգամայն անստույգ բարեկամները: Թող դողա աջը և ձախը, ինչպես նաև աջ ձեացող ձախն ու ձախ ձեացող աջը, թող դողա առհասարակ ձեականությունը»:

Չնայած ոճի որոշ պրետենցիոզությանը, «Կարիճ» ամսագիրը հիմնականում կատարում էր իր առաջ դրված խնդիրները:

20-ական թվականների հայ երգիծական մամուլը ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, իր ուղղվածությամբ և բովանդակությամբ, սերտորեն կապված էր այն պատմական ժամանակաշրջանի հետ, որի պայմաններում նրան փիճակվել էր գործունեություն ծավալել: Շարունակելով անցյալի երգիծանքի առաջավոր տրագիցիաները, երբեմն ընդօրինակելով սատիրական կերպավորման հին ձևերը, այն արթնացնում և բորբոքում էր հասարակական խիղճը, ֆալսակամ սոցիալական շարիքը:

Սովետահայ երգիծական մամուլը, թերթերի երգիծական հավելվածները, գրեթե բոլոր մասսայական հրատարակություններում տեղ գտնող պլակատը և ծաղրանկարը արտաքին քաղաքական թշնամու դեմ պայքարելու համար զինված էին երգիծանքի բոլոր միջոցներով, ծաղրում և մտրակում էին մարդկանց գիտակցության մեջ անցյալի վերապրուկները, նրանց անձնական թերությունները և կենցաղային անհարմարությունները: Լայն ճակատով գաղափարական պայքար էր տարվում դաշնակների և դաշնակցության ռեցիդիվների դեմ: Պայքարի այս երկու գիծը՝ գաղափարական-քաղաքական և կենցաղային, հատկանշական է ինչպես «Զուրնա»-ի և «Կարմիր մոծակ»-ի, այնպես էլ «Խաթաբալա»-ի և «Կարիճ»-ի համար:

Ծիծաղը մեծ հնարավորություններ էր ընձեռնում, և երգիծաբանները ու ժերի ներածին շափով օգտվում էին դրանից՝ օգնելու սովետական բարոյականության ու օրինականության հաստատմանը: Նյութի երգիծական մշակումը, բացասական կողմերի սրումը օգնեցին խորամուխ լինելու հակասությունների էության մեջ՝ դրանք վերացնելու ճշմարիտ ձգտումով և ցանկությամբ:

Սփյուռքահայ երգիծական մամուլը նույնպես բարձրացնում էր ժամանակաշրջանի հատկանշական և կենսական հարցեր, կապված այն երկրի հետ, որտեղ ինքը հրատարակվում էր: Դրանցից ամենապրոգրեսիվը և նպատակա-

սլացը Երվանդ Օտյանի խմբագրությամբ լույս տեսնող «Իգնատ աղա» ամսագիրն էր: Իր գաղափարական ուղղվածությամբ և քաղաքական հասունությամբ այն, անշուշտ, զիջում էր Հայաստանի երգիծական մամուլին, բայց և այնպես դիմակազերծելով խոշոր պետությունների իմպերիալիստական զավթողական քաղաքականությունը, պսակազերծելով մեծ քաղաքի արատները, այն հանդես էր գալիս ժողովրդի դեմոկրատական խավերի պաշտպանությամբ և արտահայտում էր իր ժամանակի առաջավոր գաղափարները ու տրամադրությունները: